

որ նրանց ճանապարհից հանի: Եթէ քիւրդը խաբուի, չի գընայ արքայութիւն: Սատանաները որպէս թէ համոզում են ննջեցեալ քիւրդերին, որ նա մեռած չէ, հէնց դրա համար է, որ ասում է շէյխը. «ասան, որ ես վաղուց եմ մեռել»:

Քիւրդ ռաւանդը, այսինքն կոռուողը երբ մեռնում է իր բնական մահով, քիւրդերը չեն լացում, չեն սգում, այլ կրկընում են. «Դու պիտի կռուի դաշտում մեռնէիր, դու պիտի անուն հանէիր»: Երկու խօսք, բայց շատ բան է պարզում, բնորոշում քիւրդերի հոգեբանութիւնից:

Ե. ՖՐԱՆԳԵԱՆ

Մ Ի Վ Ե Ր Ք Է Լ . . .

(Պատմուածք)

I

Յուլիսեան երեկոյ է:

Գիշերն իջաւ և իր հսկայ թևերի տակ ծածկեց ամեն ինչ. դաշտ ու այգեստան մարուեցին ու չքացան, տիրեց համառարած խաւարը: Երկնակամարից բխրաւոր մեծ ու փոքր աստղեր լոյս են ցողում երկրի վրայ, բայց գիշերը ամենազօր է, նա կլանում է այդ շողերն էլ, կլանում ու չի փոխւում:

Անշարժ է օդը, ամառուայ թմրեցնող ու փոշոտ օդը: Բարդինները սևաւոր ուրուականների նման ցցուած են խաւարի մէջ, կարծես վրայ հասնող գիշերը նրանց քարացրել է:

Նիւրհում էր ամբողջ վ. քաղաքը:

Քաղաքի թրքախառն բնակուած թաղերից մէկում, հէնց դաշտին մօտիկ մի տան խաչփակ փոքրիկ պատուհանից դեղնազոյն լոյս էր երևում. փայտէ, եռոտանի աշտանակի—ճրագկալի վրայ վառւում էր նահապետական ճրագը, նրա բոցը մեղմիւ պլպլում էր, նախ կարմրում, ապա ծխի վերածւում, բարձրանում քուլայ-քուլայ: Օդի թոյլ տատանումից անգամ բոցը ճկւում, լիզում էր հողէ ճրագի շուրթը ու ապա նորից ուղղւում, բարձրանում էր: Նշտաբաձև ամանի թափանցիկ ձէթի մէջ դալարուած օձի նման հանգչում էր պատրոյգը, որ գլուխը մի նեղ անցքից հանած կրակ էր ժայթքում ու լուսաւորում տունը: Բոցի ամեն մի շարժումից աշտանակի ըս-

տուները ուրուականի շարժումներ էր անում, երբեմն մեծանում, հրէշային ձևեր էր ընդունում, երբեմն նուազում դիմացի պատի վրայ: Ծխից սևացած առաստաղը պսպղին էր տալիս բազմաթիւ մանր կէտերով, որոնք ցած կախուած՝ կաթելու պատրաստ էին: Մինչև կէսը սևացած պատերը տեղ-տեղ խաշաձև ճանկուում էին. փայտէ ցիցերից կախուած էին մի քանի աղքատ կարասիներ—մաղ, վիլակ—մի անուաձև գործիք, որի վրայ են հաւաքում ճախարակի մանած թելն ու կաժ դարձնում. անկիւնում դրուած էր մի ճախարակ:

Տիրում էր խորին լուռութիւն ու խաղաղութիւն. հազիւ լսում էր միայն լոյսի համար ներս խուժած մոծակների ներդաշնակ տղզոցը: Ծրագի կողքին նստած էր մի նորաստի կին. նա լուռ էր՝ ինչպէս անխօս ստուեր և անշարժ ինչպէս արձան: Դժուար էր իմանալ, քնած է նա, թէ՛ արթուն: Բայց հաս նա շարժուեց. սկսեց կարել. ծնկին դրած ձերմակեղէնը զգուշութեամբ էր շարժում, որպէսզի նրա խշռոցը չզարթնացնի կողքին նիւրհած զաւակին: Շտապ-շտապ կարում էր վարժ մատներով, հազիւ լսում էր ասեղի և թելի միակերպ ձայնը. երբեմն միայն այդ համաչափ շարժումներն և ձայնը ընդհատւում էին, երբ կինը կամ երազող որդու շարժումներն էր դիտում և կամ նորից ասեղը թելում:

Սակայն չնայած այս հոգատարութեան, որդին զարթնեց. մերկ թևերը դուրս բերելով բարակ ծածկոցի տակից՝ յետ մղեց ծածկոցը և նայեց մօրը: Կիսաստուերի մէջ մայրը նկատեց մութի մէջ ժպտացող երկու կիսաբաց աչքեր, ինքն էլ ժպտաց ու մոռացաւ գործը: Մանուկի շապկի կոճակը բացուել էր, երևում էր կուրծքը ամբողջովին, գիրուկ վիզը և կլորակ ծնօտը, որից ցած մի փափուկ մսի ծալ էր կազմուել. առողջ ու գեղեցիկ կուրծքը կանոնաւոր շնչառութիւնից համաչափ իջնում ու բարձրանում էր: Տեղ-տեղ մոծակների խայթելուց կուրծքը կարմրել էր. միապաղաղ բոլորաձև կարմրութեան շուրջն սպիտակ մարմնի գոյնը միացած մաքուր արեան կարմրութեան հետ՝ վարդի գոյն էր ստացել, որ քանի դէպի շրջանի կենտրոնն էր գնում, այնքան աւելի ու աւելի խտանում էր և վերջանում մի փոքրիկ բարձրութիւնով. այդտեղից էր ծակել մոծակի պատիճը: Վարդեր էին բացուել ասես մանկական կրծքի վրայ: Այս գեղեցկութիւնը հիացրեց մօրը, նրա սիրտը ուրախութիւնով լցուեց, և ձեռքի գործը թողնելով նա կուացաւ, համբուրեց որդուն. իսկ սա քնից գեռ ոչ բոլորովին սթափուած՝ իր մերկ թևերը փաթաթեց մօր վզին և էլ չէր ուզում բաց թողնել:

—Քնե՛ք, մայրիկ, քնե՛ք:

—Թող, ձագուգ, դու քնիր, ինձ համար դեռ շուտ է, ես պէտք է իմ գործը վերջացնեմ:

Նա ազատեց իր գլուխը որդու թեկններից:

Գրեթէ ամեն գիշեր որդին մի փոքր քնելուց յետոյ արթնանում էր, մայր և որդի երկար խօսում էին իրանց թշուառ կացութիւնից ու վշտից: Որդուն մայրը մասնակից էր անում իրան ճշող վշտին, պատմում, լաց լինում, ապա թեթեւացած սրտով, երբ կէս գիշերն անց էր լինում, մի կողմ էր դնում կարը և պառկում քնելու: Այս անգամ արդէն խօսք բաց արեց:

—Մայրիկ, հայրիկից թուղթ եկաւ:

—Ա՛խ, չէ, ձագուկ, ես հայրիկից ձեռք եմ քաշել, նա մեզ մոռացել է, ես էլ նամակի չեմ սպասում:

—Ինչո՞ւ չի գրում, մայրիկ, ճիշտ որ մեզ մոռացել է, քանի՞ տարի է, որ նամակ չես ստացել:

—Հինգ տարի է. առաջ էլի նրա հետ եղողներին տեղեկութիւն ստանում էի, այժմ այդ էլ է կտրուել, իսկի չեմ էլ իմանում, կենդանի է, թէ ոչ:—Կինն սկսեց լաց լինել: Մօր լացակումած ձայնով ասած յուսահատ խօսքերը որդու սիրտն էլ լցրին նոյն զգացմունքով: Նա էլ սկսեց լալ: Մի քիչ յետոյ լացը մոռացած դեռևս արցունքոտ աչերով նա մտածել սկսեց, նա չէր ուզում իր մօրը տխրեցնող նիւթի մասին խօսել, իր փոքրիկ գլխում մի քանի հարցեր ծագեցին, և ուզեց առանց հարցնելու այդ հարցերի պատասխանը գտնել: Պանդխտութիւնը նոր ու անսովոր բան չէր, իր ընկերներից շատերի հայրերն էլ դուրբաթ էին գնացել, բայց տարբերութիւն կար իր հօր և նրանց մէջ. նա տեսնում էր, թէ ինչպէս իր ընկերները շարունակ իրանց դարձրէ հօր մասին են խօսում, թէ նամակ, փող և ուրիշ բաներ են ուղարկում իրանց մայրերին, նա տեսնում էր, թէ ինչպէս նրանք ցոյց էին տալիս իրանց ստացած նոր կօշիկները, ֆէսերը, դասական պիտոյքները և խաղալիքները: Փոքրիկ Գարեգինը զարմանում էր. «Չէ որ իմ հայրիկն էլ հեռու երկիր դարձրութեան է գնացել, մտածում էր նա, տանը թողել է մայրիկին և իրան, ապա ինչո՞ւ միւս ղուրբաթների նման մեր մասին չի հոգում: Խեղճ մայրիկ, շատ է չարճաբարում. ախրը գոնէ նամակ ուղարկէր: Երեխան ցանկացաւ մօրը մխիթարել, մտածեց մի բան ասել, սակայն ոչինչ չգտաւ:

—Մայրիկ ջան, մի՛ լար, գուցէ հայրիկը գալու միտք ունի, դրա համար էլ նամակ չի գրում,—ասաց նա վերջապէս, բայց ինքն էլ զգալով որ մի անմիտ բան է ասել, լռեց ու մօրը նայեց: Մայրը չէր էլ լսում, խոր մտածմունքի մէջ ընկած՝ մեքենայօրէն կարում էր:

—Հայրիկը Պոլիս է, չէ՞, մայրիկ, նորից խօսեց որդիին:

—Ձէ, բալա ջան, Ամերիկա է գնացել:

—Ո՞րն է հեռու, Պոլիս, թէ՞ Ամերիկա:

—Ձեմ իմանում, հոգիս, երկուսի վրայ էլ կրակ թափուի, երկուսն էլ մեր տունը քանդեցին: Ձէ՞ որ քեզ ասացի՝ վարժապետիդ հարցրու, տես՝ Ամերիկա ի՞նչու է:

—Հա, ճիշտ որ երեկ հարցրի, բայց այնպէս բան ասացի՝ որ իսկի չհասկացայ, ասաց, թէ Ամերիկա շատ հեռու է, գետնի տակն է, աշխարհի էն միւս երեսումն է, մէկ էլ ասաց, որ երբ մեզ մօտ ցերեկ է լինում, այնտեղ գիշեր է, մենակ այս գիտեմ, որ ամենահեռու երկիրն է: Ա՛խ, մայրիկ, ի՞նչ ասեմ քեզ, ախր ինչո՞ւ թողեցիր, որ հայրիկը այդքան հեռու տեղ գնայ, այդքան հեռու տեղից իհարկէ՝ մեզ կը մոռանայ:

Որդու հարցին մայրը չպատասխանեց, նա միայն հոգոց հանեց ու լուռ մնաց: Փայլուն ասեղը նորից իր հագար անգամ կրկնած գործն էր կատարում: Կինը գործը յանկարծ թողեց և սկսեց ճրագի բոցը դիտել անթարթ. տիրեց ճնշող լուռութիւն. ճրագը հանգիստ վառում ու դեղնագոյն լոյս էր սփռում չորս կողմը: Գուրսը ներսից աւելի լուռ էր ու խաւար. լսւում էր միայն հեռաւոր այգեստանների պահապան շների գանդաղ հաջոցը և սարսուցնող ոռնոցը: Փոքրիկի՝ վրայ վատ ազդեց այս ճնշող լուռութիւնը և շների ձայնը, մօրը նայեց, որ շարունակում էր անթարթ նայել ճրագին, Էլ աւելի վախեց: Նա անպատճառ խօսել էր ուզում, որ այս քարացնող լուռութեանը վերջ տայ, բայց խօսք չգտաւ: Մայրը թիթեռների ճրագի շուրջն արած թռիչքն ու մոլեգին ճախրն էր դիտում: Այդ ողբալի տեսարանը ամեն օր տեսել էր, բայց այսօր մի նմանութիւն էր գտնում իր մտքերի և այդ տեսարանի մէջ:

—Հայրիկի դուրբաթ գնալը քանի՞ տարի է, մայրիկ:

Պատասխան տուող չկայ. մայրը տարուած է իր մտքով: Որդին կրկնեց հարցը և քաջեց մօր փեշից. այն ժամանակ նա սթափուեց, ձեռներով դէմքն ու աչքերը շփեց՝ կարծես աշխատելով ազատուել ցնորական մտքերի ազդեցութիւնից:

—Շատ վաղուց է,—ասաց նա.—դու դեռ չկայիր, նրա զրնայուց երեք ամիս յետոյ աշխարհ եկար. աշունքին ճիշտ ութ տարի կը լինի: Ո՛ւթ տարի. քիչ բան չէ,—շարունակեց նա ինքնիրեն խօսել.—ուրիշ տարուց յետոյ մարդ ամեն բան կը մոռանայ. ուրիշ տարին մի կեանք է. ես էլ եմ մոռացել նրա դէմքը: Գոյնը տեսնեմ, չեմ էլ ճանաչի, կէս տարի հագիւ միասին մնացինք. կէս տարին ի՞նչ է որ, իհարկէ կը մոռանայ: Որդուն չի տեսել. ինձ էլ չի յիշում, իհարկէ կը մոռանայ. նամակով

Բնչ կը լինի: Ուզեցի որդու պատկերն ուղարկել, գուցէ կորած-մոռացուած սէրը յիշէր, բայց մէկ ոսկի ձրտեղից գտնեմ պատկերահանին տալու. հասցէն էլ հաստատ չգիտեմ, ուր ուղարկեմ:

Վիշտը, անցեալի աղօտ յիշողութիւնները ընկճեցին նըրան. անյոյս ապագան, մութ ու անորոշ, քաջալերող չէր, ու նա հին վշտին յանձնուեց. կարօտ զգաց դէպի ամուսինը. ինչքան էլ ապերախ լինի նա, դարձեալ սիրող կնոջ գիրկը պատրաստ էր մոռացնել տալու դաժան պանդխտութիւնը: Սովորականի պէս ծանրացող վիշտը երգով թեթևացնել ուզեց-մեղմ ձայնով սկսեց.

Մովուն խաւքըմ կէր, անունն էր արոր,
Վզիկն էր էրկէն, սըրտիկ սևաւոր,
Կապեմ բէշարէն, էրթամ խետ ինոր,
Էն իմ դարդ գիտի, ես էլ գէօ ինոր:
Արի, եմը, արի, կուրբաթ մի մնա,
Աստըւորի մալ ձի, քե չի մնայ...
Քամբախ Բէյ-Օղլի, փլի Ուաքիւդար,
Որ իմ եար չանի վեր ձի դարբէշար:
Արի եմը, արի, խոռվ մի մնա,
Աստըւորի բան մզիկ չի մնայ...¹

Կանացի վշտալի սրտից բղխած այս երգը ժայթքելով դուրս թռաւ. ձայնի հնչիւնները սիրտ կտրատող էին. մեղամաղձոտ եղանակը նոր ոյժ էր ստանում թախծով լի հոգուց բըղխած շեշտերից. ձայնը բազմաթիւ խաղերով երկարում էր. ելեկէշները բազմազան էին. նրանք վերջանում էին մի զիւ ձայնով. վերջին հնչիւնը հոգոց էր միայն: Երբ զգացմունքը թափ ստացաւ, երգի ազդեցութիւնից կրկնապատկուեց, կինը դէն շրպրտեց անուշադիր մնացած կարը, ձեռները ծնկին կցեց ու գլուխը բարձր բռնած շարունակեց երգը.

Երկինքն ի ամպեր, կու գայ մարմար ձիւն,
Կը խալի, թափի վեր մալուլ մարդուն.
Մէկ քս եմ մալուլ, թէ աշխարհ բիթիւն,
Քո սիրու խամար մնամ երերուն:

Արի, եմը, արի...

Բուռն զգացմունքից այլևս ձայնը բաց թողեց. «Էս գիշերն անց, ամենք խոր քնի մէջ, ով պիտի լսի», մտածեց նա: Վերջին կրկնակները—Արի, եմը, արի—նայնպիսի շեշտերով էր հնչում, որ քարը կ'արտասուէր: Կանացի արծաթահնչիւն ձայնի ակիքները տունը ողողում էին ու ապա դուրս հոսում պատուհաններից հնւթ ու հեռւ... հրաշալի ձայնը անդիմա-

դրեցի հրապոյր էր սփռում իր շուրջը: Սակայն հիմ կար լսող-
միայն որդին էր, որը ոչինչ չէր հասկանում այդ բոլորից-
մօր երգը շատ էր լսել. բայց այդպէս սանձարձակ ձայնով և
տարօրինակ զգացմունքով նա չէր լսել: Մայրը լռեց. նրա
արտաստեղծութիւնը աչքերը բոցոտ հայեացքով նորից ճրագն էին
դիտում: Անմիտ թիթեռները— ճրագի փարվանաները— անսպառ
եռանդով իրանց գործն էին շարունակում, և մայրը աչքով կը-
լանում էր այդ տեսարանը: Տիրեց առաջուանից աւելի ճնշող
լուսթիւն. որդին էլ չկարողացաւ համբերել, ու յուզուած կան-
չեց.

— Մայրիկ, մայրիկ, անի, մայրիկ:

Լալկան ձայնը, որ կարծես վերահաս վտանգից պաշ-
տըպանուելու համար մօր օգնութեանն է դիմում, շան-
թահար արաւ մօրը. նա շփոթուեց, հարազատի ձայ-
նը, նրա մերձաւորութիւնը ցնցեցին նրան: Որդու ա-
ղաղակը հնչեց նրա ականջին իբրև մի խիստ դատաւորի
ձայն, որ յանցագործին տեղնուտեղը բռնում է. նա մի բոպէ
կարծեց, թէ որդին գիտէ իր ներքին զգացմունքը, արդէն հաս-
կացել է յանցաւոր մտածմունքը, ամաչեց ու կծկուեց: Նրա
հայեացքը կարծես ասում էր իրան. «Ձեռն ամաչում, մայրիկ».
փոքրիկ երեխան խորտակել էր նրա ամբողջ զօրութիւնն
ու կամքը: Վհատուած հայեացքը դէպի որդին ուղղեց, նա էլ
էր անպաշտպան գառնուկի նման, և մայրական զգացմունքը
կրակ առաւ, մի բոպէ առաջ կրքից վառուող աչքերը անհուն
քնքշանք արտայայտեցին, նա մայր դարձաւ իր ամբողջ էու-
թեամբ, իր ուժեղ թևերով անկողնից դուրս խլեց որդուն,
սղմեց կրծքին ու կատաղի համբոյրներով ծածկեց նրա դէմքը,
ապա հեռացնելով՝ բռնեց լոյսի դէմ, զմայլելով դիտեց մի բո-
պէ, նորից գրկեց, նորից անվերջ համբոյրներ:

— Իմ հոգիս, լուսատու արևս, իմ տէրս, արևիդ մեռնիմ,
իմ պաշտպանս, իմ ազատաւարս. անի, Տէր Աստուած, մեղմ
քեզ: Քամի էր, երանգ, սև երազ... Չէ որ դու իմ որդին ես...
ախրը ես մայր իմ արդէն:

Նա երեսը որդու դէմքին կպցրած խօսում էր ու առատ
արցունք թափում. զղջման արցունքը առատ է լինում:

Որդու վախը զարմանքի փոխուեց. այս բոլորից ոչինչ
չէր հասկանում, անբացատրելի էին մանաւանդ մօր խօսքերը:

— Քննեք, մայրիկ, բաւական է, խօսեց յանկարծ Գարե-
գինը:

— Հա, արևիդ մատաղ, քննեք, արդէն շատ ուշ է:

Մայր և որդի իրար գրկած՝ անկողին մտան: Երկրորդ

հաւախօսն անցել էր, բայց դեռ ոչ մէկը չէր քնել: Մայր և որդի արթուն էին, բայց քնած էին ձեռնուով:

—Մայրիկ, Ադօն եկել է գիւղից. այսօր նորից ինձ բռնեց, համբուրեց և մի գեղեցիկ կարմիր խնձոր տուեց, որ քեզ բեքեմ, ես ձգեցի ու փախայ:

—Սո՛ւս, չլսեմ այդ անուանը:—Մայրը ձեռքով ծածկեց նրա բերանը: Քեզ չեմ ասել, որ նրա մասին բան չասես ինձ. միւս անգամ եթէ բան տայ, չվերցնես:

Որդին լռեց և բռն մտաւ:

Բայց և այնպէս նրա ներքին փոթորիկը նորից փրթաւ, խառնաշփոթ մտքերը հեղեղեցին խեղճ կնոջ մտածողութիւնը. մինչև լոյսը տանջուեց, բայց մի ելք չգտաւ, հարցերը անպատասխան էին մնում: Նրա մտքից չէին հեռանում այրող կրակի սիրով բռնուած թիթեռները: «Ի՞նչ են ուզում կրակից. ճրագը իր հրապուրիչ լոյսով խաբում է նրանց ու խանձում, բայց նրանք չեն խրատուում, չեն հեռանում ամենեւին. ձգտում են դէպի նա, մինչև որ այլևս անկարող են լինում մի յետին թռիչք էլ անելու, ձգտում են մինչև իրանց կեանքի վերջը: Առանց թևերի, կոնակի վրայ ընկած, իրանց դեռևս կարող ոտիկներն են շարժում, այդ դրութեամբ կարօտալի աչքերով նայում են հրապուրիչ բոցին, նայում ու մրկում առանց կրակի: Առանց թևերի թռչել չի լինի. բայց նրանք անմտաբար ոտքով թռչել են աշխատում. ինչո՞ւ համար—ոտքն էլ այրելու. իսկ եթէ այդ էլ խանձուի, էլի չեն դադարի. շարժում են իրանց այլանդակ մարմնի մկանսները. սողոսկելով են ուզում հասնել փայլուն կէտին: Ա՛խ, Տէր Աստուած, ի՞նչ են ուզում ախրը նրանք այդ այրող կրակից, դէպի բարձրն ու լուսաւորը սողալով հասնել չի լինի»: Քիչ մտածելուց յետոյ տեսաւ որ «նոր միտքը ճիշտ այնպէս է իր համար, ինչպէս կրակը թիթեռների համար»։ Ի՞նչպէս, միթէ՞ ինքն էլ տխմար միջատների նման կրակի մէջ նետուել է ուզում... Իր սեփական թևերն այրելու համար. զգում է, որ այդպէս է, բայց իմանալով իսկ չպիտի կարողանայ դադարել ձգտելուց. դէպի երջանկաբեր միտքը պիտի դիմի, բայց առանց վայելել կարողանալու, սևացած հոգով, լըքուած պիտի մնայ ամենքից, այնուամենայնիւ դարձեալ պիտի ձգտի... «Ուրեմն այն երջանիկ ապագան, որի մասին այնպէս մտածում եմ, կրակ պիտի լինի ինձ այրելու համար. անդ է երջանկութիւնը. չկայ, չկայ»... Վերջին խօսքերը նա բարձր ասաց, որդուն գրկած դրութեամբ, շրթունքը նրա երեսին կպցրած, ձայնը որդու ականջին շատ մօտ հնչեց. նա քնի մէջ՝ մօր գրկում շարժուեց. յափշտակուած մայրը սթափուեց:

«սև մաքերը» չքացան իսկոյն, և մի «պարզ ճշմարտութիւն» ցցուեց նրա ուղեղի մէջ. «Ես մայր եմ, որդի ունիմ, ահա իմ երջանկութիւնն, իմ կեանքը»:

Դուրսը լուսանում էր...

II

Մարինան հազիւ ծխական դպրոցից դուրս եկած՝ մի գեղեցիկ հարսնացու էր: Չքաւոր ծնողների զաւակ—մայրը չքաւորութիւնից մեռած, հայրը վաղուց պանդխտութեան մէջ կորած—որը մնալով, իր պառաւ տատի ձօռ էր ապաստան գտել. ոչինչ էլէր իմանում հօր ու մօր մասին, միայն հրեքմն պառաւից էր լսում մօր թշուառութեան և հօր անհետ կորչելու մասին: Գթասիրտ Ոսկուհատ խաթունի ապրուստի միջոցը իր փոքրիկ այգին էր, ուր տեղափոխւում էր ամառները. որը աղջիկն էլ նրան ընկերանում էր: Ամբողջ օրը ստուերախիտ այգում, զուլալ առուների ափին խաղում, ապա հանգչում էր նա. թէև որը, բայց գթասիրտ տատի հոգացողութեամբ աճում էր փոքրիկ Մարինան՝ առուի ափերին արևերես տեղում աճած ու զարգացած ծաղիկների նման: Նրա գողտրիկ արևառ դէմքը պաղ ջրով լուացուելուց յետոյ կարմրում, չքնաղանում էր. մի հրաշալի ծաղիկ էլ «խորոտ Մարինէն» էր: Իսկ պառաւ Ոսկուհատը մայրական խանդով գրկում, համբուրում էր այդ ծաղիկը:

Անցան տարիներ, հովասուն ամառներ ու մեղմ ձմեռներ. դրսի ցաւերին գրեթէ անծանօթ՝ մեծացաւ, հասունացաւ «խորոտ Մարինէն». մէկ օր էլ յանկարծ Ոսկուհատ խաթունը մի մատանի դրաւ նրա մատը: Առանց հարցուփորձի նա իր թոռան նշան էր դրել:

—Մարինա, որդի, գնանք ժամ, աղօթիր, որ Աստուած քեզ բախտ տայ. քեզ նշանեցի, էսօր քո նշանը օրհնել պիտի տամ: Աղօթիր որ մարդդ կարիքութեան սէր չունենայ, քո կշտին լինի, թող ցամաք հաց լինի ձեր կերածը:

Եկեղեցուց տուն դառնալուց յետոյ պառաւը համբուրեց նշանուած աղջկան և օրհնեց, վերջին խօսքը—«մէկ բարձի ծերանաք»—ասելուց յետոյ մարդ ուղարկեց փեսին կանչելու, որին հրամայեց իր նշանածի ճակատը համբուրելու: Սրանով էլ ամեն բան վերջացաւ: Նա առաջուց խօսք էր առել փեսացուից, «որ պանդխտութիւն չպէտք է գնայ, ապա թէ ոչ նրան աղջիկ տուող չկայ: Պանդխտութիւնը քամբախտութիւն

է, սե է էն օրը, երբ տնից մարդու ձայնը չսոււի, երբ տունը առանց մարդու է մնում», համոզում էր պառաւը:

Երկու տարուց յետոյ մի օր պառաւը այգում խօսեց Մարինի հետ հարսանիքի մասին, թէ իր օրերը համրուած են, և միտք ունի այգեկութից յետոյ հարսանիք անի: Այդպէս էլ եղաւ:

Ի՞նչ հրաշալի էր. զով ու լուանկայ գիշեր. Մարինի ընկերուհիները պսակի նախընթաց երեկոյեան շրջապատել էին նրան այգում, խիտ ծառերի մութ ստուերի մէջ. նրանք ծաղրում էին, ականջը քաշում, այտերը կսմթում էին խեղճ աղջկան, քրքրւում էին ուրախ-ուրախ, սրախօսութիւններին, ականարկութիւններին վերջ չկար, իսկ նա մինչև ականջը կարմրած՝ համեստ ժպտով էր փորձում պատասխանել չարածիններին: Զլււացող խումբը այգու մէկ անկիւնից միւսն էր գնում. թէև գիշեր, հեռաւոր այգում, բայց վախ չկար ամենեկին. այգիների պահապանները հարեան այգում նոյնպէս ասում, խօսում, ծիծաղում էին, որոնց մէջ էր և՛ փեսան:

Հարսանիքը եղաւ. շուտով մեռաւ Ոսկունատ խաթունը, նրա վերջին խօսքն եղաւ. «Փեսա՛ ջան, տեղ չերթաս. իմ աղջրկանս սեւաւոր չանես»: Բայց իզուր. նիւթական աննպաստ հանգամանքները, վրա՛ եկող սոսկալի կոտորածները և տագնապալի վիճակը անտես անել տուին գեղեցիկ կնոջ արցունքն ու աղաչանքը, ու նա գնաց դէպի ոսկի բաժանող Ամերիկա: Առաջին գիշերուայ մենակութիւնը, անքուն ժամերի տանջանքները միտ բերելով՝ դառն-դառն լաց եղաւ Մարինան. երեք ամիս մենակ տանջուելուց յետոյ նորածին զաւակի առաջին ճիչը լցրեց մօր սիրտը անհուն բերկրանքով: Նա մոռացաւ մարդու կարօտն էլ, իրան էլ. բայց յետոյ տանջալից օրերը նորից եկան. երրորդ նամակից յետոյ այլևս ոչ մի լուր. մայր լինելը բաւական չէր. մի փոքրիկ լալկան էակ. նրանով չէր կարելի ամուսնու մասին մտածելուց դադարել. նա երկար համբերել կարող էր, եթէ նամակները չպակասէին: Ութ տարին մի բան չի. եթէ... եթէ միայն յոյս ունենայ, որ կը կարողանայ նորից ետ ստանալ իր կորած-մոլորուած սիրելիին, փարել նրա վզին, պատմել իր տանջանքների մասին, ցոյց տալ, որ այդ մի ըրպէն էլ հերիք է ութ տարիի տեւական տագնապանքները մոռանալու համար: Ափսոս, որ այդպէս չէր լինելու. յոյս չկար: Որդին, նամակը և հեռաւոր յոյսը նրան երջանիկ կ'անէին, եթէ նոյնիսկ ուժասպառ աշխատանքով չոր հաց էլ հազիւ ճարել կարողանար: Եւ այս յուսահատ, անմխիթար օրերին յանկարծ ի՞նչ, դրացունհին տալիս է մի կեղտոտ,

խոնաւութիւնից տառերը շնչուած թղթի կտոր. Մարինան հազիւ է կարողանում կարդալ. — «Ասացէք խեղճ Մարինին, որ իր գլխի ճարը տեսնի. նրա մարդուց էլ խէր չկայ: Մի քանի անգամ հայրենակիցներով հաւաքուած՝ կանչեցինք, խրատեցինք, թէ խեղճ են քո կիներ, որդիդ, մի քիչ էլ նրանց մասին մտածիր, հերիք է տանջես խեղճերին: Բայց նա պատասխանեց — այստեղ էլ կին չատ կայ. ես նրանց մասին մտածում եմ — ասաց ու մի լաւ էլ հայհոյելով դուրս գնաց: Այժմ էլ իր արած անպիտանութիւնների պատճառով բանտարկուած է»: Նամակի վերջում աւելացրուած էր և մի քանի ուրիշ պանդուխտների մասին, որոնց մասին նոյնպէս իմաց էր տրուած նրանց թշուառ կիներին:

Շարունակելով այսպէս քրքրել յիշողութիւնները, նա չափազանց դտաւ այս բոլոր տանջանքները. երջանիկ յիշատակները հետզհետէ գունաւորուեցին, սեպցան ու տանջալից, թունաւոր դարձան: Այս համեմատութիւնը աւելի էր սաստկացրել ու սկսել յիշատակների թողած տպաւորութիւնը: Նա նոր հասկացաւ, թէ ինչու տատը դեռ իր մանկութեան օրերում սովորեցրել էր ամենօրեայ աղօթքի մէջ պանդուխտների մասին էլ հոգալ: «Հոգիդ լոյս դառնայ, քեռմամա. դու լաւ գիտէիր, որ պանդխտութիւնը մահ է. պանդուխտ ուղարկել նշանակում է մարդուն սաղ-սաղ գերեզման դնել»: Նա առաջուց, հէնց նոյն օրը պիտի ողբար մարդու մահը և ոչ գութկան նամակից յետոյ. այդ էլ նոր հասկացաւ և սկսեց ողբալ: Մօր անվերջ լացը տեսնելով՝ որդին էլ էր լալիս. դժբախտների արցունքը հոսում էր օր ու գիշեր: Ապա մայրը որդուն խնայելով՝ սկսեց ծածուկ լալ գիշերը մինչև լոյսը:

Նամակից յետոյ այս դաժան օրերում շուտով վրայ հասան թանգութեան օրերը. աշխատանքը բոլորովին դադարեց. լինում էին օրեր, երբ մայր ու որդի բանջարեղէնով էին գլուխ պահում: Եւ այդ թշուառութեան օրերում լալիւր մարդիկ այդ կնոջ մարմինը դնել ուղեցին, բայց անարատ կիներ իր վեց տարեկան որդուն գիրկն առած՝ թքով ու քարով պատասխանեց այդպիսիներին:

Անցան այս դժուարին օրերն էլ. մեծանում էր Գարեգինը և մխիթարում մօրը: Բայց այս բոլորից յետոյ ի՞նչ. ի՞նչպէս էր անցել այդ կնոջ երիտասարդ կեանքը — չարչարանքով ու տանջանքով... նա մի ատելութիւն զգաց դէպի այդ անցեալը. այդպէս էլ պիտի շարունակուէր... Այս մտածողութիւնից յետոյ կնոջ սիրտը սկսեց արագ-արագ բաբախել. նա անսովոր ցանկութիւն, խանդ ստացաւ ուրախանալու, մի բան պոնել,

մի քաղցր յիշատակով խնդալ, բայց չկար կարծես. և ահա եկաւ նոր միտքը իր բոլոր հեշտանքներով, ծաւալեց, բռնեց նրա ողջ էութիւնը, մի ախորժելի սարսուռ անցաւ մարմնով... նա դեռ երիտասարդ էր, առոյգ ու գեղեցիկ: Միտով անձնատուր եղաւ այդ նոր ու հաճելի զգացմունքին, թէև նրա կիսաբաց շրթունքները «չէ, չէ» էին կրկնում թոյլ ձայնով: Ճանշանքի արցունքը դեռ չէր ցամաքել ժպտացող աչքերում: Ինչպէս մի կամաղուրկ արարած՝ առանց իմանալու տարուեցաւ... Անյոյս ու ամուլ ապագայ, չունի մի սպասելիք, ուրախութիւն ու բախտ չկայ, ուրեմն էլ ինչո՞ւ այնպէս չանի, որ գոնէ մի քիչ ուրախ օր տեսնի. այդ ուրախութիւնը ոչ ոք չի տայ, թող ուրեմն գողունի լինի, ոչ ոք չիմանայ...

Այս երազներից յանկարծ սթափուեց Մարինան. հեռուից լսել էր որդու ձայնը. նա կանգ առաւ իսկոյն, «ճժ բմ գնում» մըմնջաց ու իսկոյն հեռու վանեց հեշտալի զգացմունքները, բռնն սիրով ուզեց որդուն իսկոյն տեսնել, գրկել, համբուրել նրան, պաշտպանուել նրանով. երբ ուսումնարանից դարձող որդու ձայնը դրսից լսուեց, մայրը այլևս չկարողացաւ սպասել մինչև նրա տուն մտնելը, բաց արաւ դուռը այն բողբոջին, երբ նա մտնել էր ուղում: Զարմացած որդին իրան մօր գրկում գտաւ, կրծքին սեղմուած. կրակոտ համբոյրներին վերջ չկար: Գարեգինը յիշեց մի օր առաջ գիշերուայ համանման դէպքը և աշխատեց ազատուել մօր գրկից՝ առանց իմանալու թէ ինչո՞ւ:

— Ի՞նչ է եղել քեզ, մայրիկ, այդ ի՞նչ տեսակ ես, ինչո՞ւ ես այդպէս անում: Այս ասաց ու ազատուելով մօր թուլացած թևերից՝ սկսեց ձեռքով սրբել համբոյրից թացուած այտերը: Մայրը հտ-հտ գնաց ու պատին յենուեց, որդու ձայնը, նայուածքը նրա հօրը յիշեցրին, իր ամուսնո՞ւն: Ինչպէս մաքուր, հրեշտակային էր Գարեգինի նայուածքը, իսկ ինքը որքան յանցաւոր, ցած և ստոր. այն անմեղ, զարմացած հայեացքի մէջ յանդիմանութիւն տեսաւ:

Ձեռներով երեսը ծածկած՝ նա բարձրաձայն հեկեկաց... Երեխան նայում էր մօրը, ոչինչ չէր հասկանում նրա այս տարօրինակ յուզմունքից և յետոյ ինքն էլ սկսեց հեկեկալով լալ: Եւ քանի՞ անգամ այսպէս...

Ամառնային արձակուրդի ամբողջ ամսին Մարինան որդուն չթողեց իրանից հեռանալու. եթէ արձակուրդ էլ չլինէր, միևնոյն է, նա չէր թողնի նորից: Գարեգինի ներկայութիւնը մօր կամքն էր զօրացնում, նա լաւ կուտէր: Գիշերները, երբ

չէր կարողանում քնել, հալածող մտքերից ազատ մնալու համար արթնացնում էր որդուն: Մայր և որդի մինչև լուսափառ զրոյց էին անում: Պատահում էր երբեմն, Գարեգինը լսում էր մօր խօսակցութիւնը քնի մէջ, որից բան չէր հասկանում. մայրը յաճախ կրկնում էր. «Ձէ, չէ, չեմ անի, ախրը ես արդէն մեծ տղայ ունիմ. Աստուծով իմ Գարեգինը կ'ազատի ինձ ամեն փորձանքից: Այսպէս խօսելուց յետոյ մայրը քնի մէջ գրկախառնութեան շարժումներ էր անում, համբոյր տալիս և ապա լաց էր լինում: Ինչի՞ց էր վախենում, ի՞նչ վտանգ կամ մի վատ բան կար, որից ինքը մօրը պիտի պաշտպանէր, այդ չէր ըմբռնում նա: Յիշեց մի անգամ Ադօին, որի անունը մայրը լըսել անգամ չուզեց. «Երևի մայրիկը Ադօից է վախենում», մըտածեց նա. բայց ախրը Ադօն վատ մարդ չի երևում. թէև քիւրդ է, սակայն միւսների նման չէ. ինքը վախենում է միւս քիւրդերից, բայց Ադօից երբէք: Նա մայրիկի մասին է հարցընում, թէ ինչո՞ւ հայրիկը նամակ չի ուղարկում, ինչո՞ւ մայրիկին այդպէս խեղճ է թողել. ասում է, որ նա շատ վատ մարդ պիտի լինի, որ այդպէս լաւ մայրիկին անտէր է թողել: Այս բոլորից ոչ մի վախենալու բան չկայ, Ադօից վախ չկայ: Ապա մի է այն չար մարդը, որից պիտի վախենալ, այդ չէր կարողանում հասկանալ: Նրա փոքրիկ գլուխը շատ էր մտածում մէկը գտնելու, մտածում, մտածում էր, բայց չէր գտնում: Մի անգամ էլ մօրը պատմեց նրա երազների խօսքերը և բացատրութիւն խնդրեց, բայց մայրը կարմրեց ու պատասխան չտուեց:

III

Ադօն այն քիւրդ ընտանիքների զաւակներից էր, որոնք հարուստ լինելով՝ վերջին տարիներում սկսել էին քաղաք տեղափոխուել. միայն ընտանիքի մի մասը ամառը գիւղ էր գընում վարուցանք անելու:

Հինգ տարուց իվեր Ադօն սիրում էր Մարինին, բայց իր այդ սէրը շատ ուշ յայտնեց նրան: Քաղաք տեղափոխուելուց յետոյ քիւրդ երիտասարդը մի տեսակ խուզարկել էր իրանց թաղը, տեղեկացել թէ հայ և թէ թիւրք դրացիների մասին: Մի երեկոյ էլ աղիւս շարելով ոտքի տակ, բարձրացաւ, նայեց փոքրիկ պատուհանից, տեսաւ ճախարակ մանող Մարինին. գեղեցիկ կնոջ դէմքը ճրագի լուսով ողողուած սքանչելի էր. սկզբում նա կարծեց թէ դրախտի հիւրիփէրի է տեսնում երազի մէջ, յետոյ ճախարակի ձայնը, կնոջ երգը սթափեցրին նրան, նա զմայլուեց: Երկար տարիներից փնտրած բանը գը-

տած կարծեց և սկսեց ամեն երեկոյ պարբերաբար կրկնել իր գաղտնի այցելութիւնները. աղիւսներ էր շարում, պատուանդան կազմում, գաղտնի դիտում ու նորից իր այցի հետքը կորցնում, ապա հեռանում՝ մօտիկ բարդիների մէջ երգում էր մինչև ուշ գիշերը:

Մարինան այս ամենից տեղեկութիւն չուներ. նա քիւրդ երիտասարդին ճանաչում էր նրա երգերից. շատ էր լսել նրա «եալեներն» ու «մանիկները». ամեն երեկոյ սովորել էր սպասել որոշուած ժամին, հաճոյքով լսում էր տղամարդու դուրեկան ձայնը, երգի մեղամաղձիկ եղանակները նրա սրտի հետ էին խօսում:

— Խեղդուած լամուկն ինչպէս լաւ է երգում, լսի՛ր, դու էլ սովորի՛ր, — ասում էր նա Գարեգին:

Մի անորոշ մտերմութիւն էր ստեղծւում երգողի և սիրով լսողի մէջ, մի անտես, անճանաչ բարեկամութիւն, որ լոկ երազի պէս էր:

Երկու տարի սպասելուց յետոյ Ադօն որոշեց իր ծածուկ սէրը յայտնել Մարինին: Միջնորդը Գարեգինը պիտի լինէր. սկզբում փոքրիկը վախենում, փախչում էր. բայց յետոյ քիւրդի սիրալիր վարմունքը վստահութիւն ներշնչեց, և նա կամաց-կամաց թողեց, որ Ադօն իրան գրկի, համբուրի՝ Ադօն սկսեց շատ հեռուից. մօր մասին ամենեին չէր խօսում. նա զգում էր իր այդ զգացմունքի տարօրինակութիւնը, հասկանում էր, թէ ինչ խելացնոր բան պիտի երեւայ դիմացինին, թէ ինչպէս, երբ վերջինս իմանայ, «գրողի տարած լամուկ» պիտի անուանի իրան. սակայն այս բոլորը լաւ իմանալով հանդերձ՝ մճուլ էր յամառ սիրով սպասել և յուսալ. թող երկար տարիների պէտք լինի... Նա մի թիւրքերէն նախադասութիւն սովորեցրեց Գարեգին, որ գնա, մօրն ասի՝ մայրը լսեց, զարմացաւ, բայց կարևորութիւն չտուաւ և որդուն արգելեց քիւրդի հետ խօսել: Անսպասելի չէր այս վարմունքը Ադօնի համար, և նա էլի սպասեց:

Մի ժամանակից յետոյ նորից սկսեց խօսեցնել Գարեգին. իմացաւ պանդուխտ հօր վարմունքի մասին, լսեց մի նամակի մասին, որից յետոյ իր մայրիկը շատ էր լաց եղել: Ուրիշներից իմացաւ պանդուխտ դրացու գրածի բովանդակութիւնը, և ծագած փոքրիկ յոյսը իրան ուրախացրեց, թէ և տեսնելով Մարինի վիշտն՝ ինքն էլ էր ցաւում:

Այսպէս անցաւ երկու տարի էլ, Մարինան իսկի չէր էլ մտածում օտարոտի դէպքի մասին և գրեթէ մոռացել էր, երբ յանկարծ Ադօն մի յանդուգն փորձ արաւ. Զորս տարի լուռ տանջուելուց ու սպասելուց յետոյ նա որոշեց դէմադէմ խօսել

իր սիրած կնոջ հետ: Գիշերային սովորական երգից յետոյ նա մօտեցաւ Մարինի պատուհանին, դէմքը երևացրեց, բայց և իսկոյն ետ քաշուեց՝ նկատելով սարսափահար եղած մօրը և որդուն: Նա խիստ յանդիմանեց իրան և որոշեց ցերեկով խօսել: Փողոցով անցնելիս մի օր նկատեց դրան մէջ կազնած Մարինին, որ ուզում էր ներս քաշուել: Ադօն դանդաղացրեց քայլերը և առանց այն կողմը նայելու սկսեց խօսել: Փողոցում մարդ չկար:

— Մարինա խանրմ:

— Ցաւ ու չոռ, եղաւ պատասխանը:

— Թող այդպէս լինի, միայն, խնդրում եմ, լսիր իմ խօսքը: Ամենևին մի վախենար ինձնից, ես քո ծառան եմ, քո հրամանը ինձ համար սուրբ է. խնդրում եմ, թող որ երեկոները երբեմն քեզ տեսնեմ և հետդ խօսեմ. մի վախենար, եթէ հրաժայես, ամենևին չեմ մօտենայ, ես քո տան պահապանն եմ:

— Տաճկի լամսկ, ինչ բան ունիս ինձ հետ. գնա բանիդ, — ասաց Մարինան ու դուռը վրայ զարկեց:

Նա չհամարձակուեց ոչ ոքի ասել. աւելի շատ էր վախենում բամբասանքից, չար լեզուներից, քան քիւրդից: Նրա վախը, ինքն էլ չգիտէր ինչու, չքացաւ, երբ Ադօի դէմքի արտայայտութիւնը, նրա խօսելու եղանակը մտաբերեց, վստահացաւ, թէ քիւրդը վտանգաւոր չէ: Տունը անապահով էր, միւս տներէց հեռու, դաշտին մօտիկ, Ադօն կարող էր հեշտութեամբ գործի դիմել, բայց այն հանգամանքը, որ այս դրութեամբ իսկ Ադօն այսքան ժամանակ փնասելու մի փորձ դեռ չէր արել, հանգստացրեց վրդովուած կնոջ, և նա լուռ մնաց:

Մի երկու անգամ Գարեգինը փող ստացաւ Ադօից, որ փորձում էր օգնել Թանգութեան օրերում. բայց մօր հրամանով որդին իսկոյն ետ էր բերում, ձգում ու փախչում: Շղաւ մի ժամանակ, երբ Մարինան կարծեց թէ քիւրդը իրան մոռացել է արդէն, ուրեմն վտանգ չկայ այլեւ. չէին լսում գիշերային երգերը, Ադօն հեռու էր մնում:

IV

Վերջին զարնան գիւղ գնալու հերթը Ադօին էր. մի օր առաջ նա իր միտքը թիւրքերէն նախադասութեամբ հաղորդեց Մարինին և մի տեսակցութիւն խնդրեց՝ պատուհանից լինելու խոստումով. չնայելով բացասական պատասխանին՝ նա գնաց և այնքան սպասեց, մինչև որ կէսգիշեր եղաւ, ու Գարեգինը քնեց: Մարինան դեռ կարում էր, հետն էլ մեղմ ձայնով երգում. տան մէջ անդորրութիւն էր տիրում, հանդարտ վառ-

ւում էր ճրագը; լսւում էր քնած երեխայի շնչառութիւնը: Մտքերի մէջ մոլորուած Մարինան չէր մտածում Ադօի մասին և չէր սպասում, որ նա առանց թոյլտուութեան կը գայ խօսելու, բայց յանկարծ լսեց ծանօթ ոտնաձայնը, որ մօտենում էր. նրա մարմնով ցուրտ սարսուռ անցաւ, երկիւղից սիրտը արագ բարախել սկսեց: Ադօն հազով իմաց տալուց յետոյ՝ ձեռքը պատուհանին ձգեց բարձրանալու համար: Կինը ակամայ այն կողմը նայեց և տեսաւ ձեռքը ու իսկոյն գլուխը խոնարհեցրեց, որ դէմքը ամենևին չերևայ:

— Մարինա, դու արքայութեան փէրի ես, իմ հրեշտակը, Ադօն թող շան նման քո ծառան դառնայ. հերիք չէ՞ տանջես ինձ: Ինչո՞ւ ես գլուխդ ծոկել, թող մի անգամ գոնէ երեսդ տեսնեմ, վաղը գիւղ պիտի գնամ, չորս ամսից հազիւ դառնամ: Կ'երթամ, սար ու ձոր ման կը դամ, շատ ջէյրաններ կը տեսնեմ. քարից քար, թփից թուփ են թռչում, կանաչ խոտերի վրայ, պաղ աղբիւրների մօտ, բարձր լեռներում արածում են նրանք, բայց դժուար, իմ աննման ջէյրան, մենակ, տանը փակուած՝ մաշւում ես և չես թողնում քո կրակով վառուած Ադօին մէկ ուրախ օր տեսնել. մի անգամ ջնայեցիր ինձ էդ կրակ աչքերովդ: Մեր զոգանի (օբա) քրդուհիները էն սիրուն ջէյրանների նման բռնում են սար ու ձոր, նրանց սև աչքերը, ասմար դէմքը մրկացնում են մեր քաջքիւրդ երիտասարդների սրտերը, ամենը հասնում են իրանց սրտի մուրազին, մէկ ես եմ բնավորաւ: Գեղեցիկ Սողթանը, մեր բէկի աղջիկը, ինձ աչք-ունք անելով խէր չտեսաւ. նա քո առաջ կարաւաշ պիտի լինէր, հւր մնաց, որ իմ սիրտը քեզնից կտրէր, հեռացնէր: Դէ, խօսի՛ր, Մարինա խանըմ, քո շունը լինիմ, խօսիր, գոնէ ինձ նայիր, հրամայիր, իսկոյն կը կորչեմ աչքիցդ, էլ չեմ երևայ: Է՛յ, քար-սիրտ հայ կնիկ, հինգ տարի է՝ տանջւում եմ քեզ համար, մէկ անգամ էդ լուսնակ երեսդ ինձ ջնայեց քաղցր աչքով, մի անուշ խօսքի կարօտ մնացի:

Մարինի գուլթը շարժուեց այս սրտաշարժ խօսքերից. մի րոպէ նա մտաւ տարուած քիւրդի դրութեան մէջ, խղճաց նրան: Զուգեց կարճ կապել, ուղեց խօսեցնել նորից և համոզել, որ ցնորուած մտքերից ձեռք վերցնի:

— Գրողի տարած քիւրդ, դու գիտ ես. չեմ մտածում, որ ես մարդ ունիմ, հայ եմ. ինչո՞ւ ես խելքդ կորցրել. գնա գիւղ, ամեն բան մոռացիր. մի աղջիկ գտիր ու պսակուիր:

Այսպէս պարզ խօսել սկսեց Մարինան. նա չէր վախենում, արհամարհում էր նրան:

— Քո մարդը ձեռքս ընկնէր, ես խանչալս նրա սիրտը

կը կոխէի. նա է քո անբախտութեան, քո տանջանքի պատճառը, քեզ պէս փէրիին տանջողը մարդ չէ, այլ սատանայ:

—Ձայնդ կտրիր, սատանան դժու էս, որ չես ամաչում էս գիշերով կինարմատին վախեցնել. ամօթ քեզ, Գնա, ինձնից ձեռք վերցրու, քեզ պէս գժերին պէտք է կապել. ախր մի անգամ մտածիր, էդ քո արածը ինչի՞ նման է, մինչև երբ էդպէս պիտի մնաս: Գնա գիւղ, էդ քո Սոլթանին ան, պսակուիր, պրծիր:

—Էդ խօսքերը ինձ մի ասի: Էս բանում հայ, քիւրդ չկայ, իմ աննման հիւրի, դու ինձ համար ամեն ինչ ես, ինչ հրամայես՝ կ'անեմ: Կ'ուզես ազատուել ինձնից, այս բոլորին խանչալս կը խրեմ սիրտս, որը բաւական է տանջուի ու մաշուի:

Մանչալը երևաց պատուհանի մէջ. ճրագի լոյսից պսպրդում էր կնոջը սարսափեցնող գործիքը: Մինչև այդ նա շարունակ գլուխը ծածկ՝ չէր ուզում դէմքը Ադոին ցոյց տալ, խանչալի անունը լսելով՝ մոռացաւ այդ ու քիւրդին նայեց:

—Ա՛յ, այդպէս, աննման փէրի, մէկ անգամ գոնէ նայեցիր: Ի՜նչ քարսիրտն ես եղել. այդպէս ես բոլոր կինարմատները. տանջում են երիտասարդին, սպանում և չեն ուզում մի ժպիտ ընծայել, այն ինչ՝ տղամարդը կեանք է կորցնում:

Քիւրդը սկսեց ձայնը բարձրացնել:

—Կամաց խօսիր, ա՛յ գիժ քիւրդ. ի՜նչ ես անում. Գարեգինը կ'արթնանայ հիմայ ու կը վախենայ,—ասաց Մարինան և տեսնելով՝ որ իր այդ վարմունքով քիւրդին յոյս է տալիս, զայրացաւ նրա վրայ և հրամայեց իսկոյն հեռանալ:

—Կ'երթամ, իսկոյն կ'երթամ, միայն վերջիս խօսքս լսիր. եթէ հարիւր տարի էլ ապրեմ, իմացիր, որ քեզ համար եմ ապրում: Գնալուց առաջ մի խնդիրք էլ ունիմ. առ այս փողը, քեզ աշխատանքով շատ մի մաշիր:

Նա ներս ձգեց երկու տաճկական ոսկի:

—Ա՛ռ ու կորիր, մէկ էլ աչքիս չերևաս. դու էլ մեռնես, քո փողն էլ գլխիդ խոով մնայ,—ասաց զայրացած Մարինան ու փողը դուրս շարտեց:

Ադոն այնուհետեւ էլ չերևաց. նա գիւղ էր գնացել: Ամառուայ սկզբներին երկու օրով քաղաք եկաւ, Գարեգինն մի գեղեցիկ խնձոր տուեց Մարինին տալու համար: Այս բանը շատ վրդովեց վերջինս, պատճառ դարձաւ մոռացուած քիւրդին նորից յիշելու և այս անգամ բոլորովին այլ, փոխուած զգացմունքով: Հակառակ իր կամքին՝ չէր կարողանում մոռանալ Ադոին. մէկ-մէկ կրկնում էին նրա խօսքերը իր ականջում. երկար մտածելուց յետոյ խղճալ սկսեց, ապա և սրտանց կա-

րեկցում էր. իսկ երբ այս կարեկցութիւնը համակրանքի փոխուեց, այն ժամանակ անհնարինը հնարաւոր դարձաւ, և յանցաւոր մտքերը պաշարեցին նրան, որոնցից ազատուելու համար մայրական բուռն սիրոյ հովանաւորութեան տակ էր ուզում ժողովել: Գիշերային տանջալից աշխատանքները, իր ամեն կողմից երեսի վրայ մնալը, անյուսուցիւնը, թէ յետոյ կարող պիտի լինի օր ու արեւ տեսնել, ահա այս բոլորը կապարի նման ճնշում էին նրա դեռ երիտասարդական զգացմունքները ընդունակ սիրտը, որից յետոյ սկսեց կամաց-կամաց անդունդի եզրերին ձօնենալ: Նրա սիրտը մի անբացատրելի հաճոյք էր զգում Ադօի մասին մտածելով: Մէկ էլ յանկարծ զգաց, որ սխալ ճանապարհով է գնում ու կանգ առաւ: Մարինան ապաւինեց աղօթքի և դէպի որդին ունեցած սիրուն:

Սկզբում նա վախով էր մոռածում արձակուրդի վերջնաւու մասին. որդու մօտիկութիւնը նսեմացնում, չքացնում էր Ադօի պատկերը:

— Գարեգին ջան, — ասում էր նա, — դու որ չլինէիր, ի՞նչ կը լինէր իմ հալը, ես ի՞նչքան վատ կը լինէի. վերեւ Աստուած է պահում, ցածը դու. իմ տէր-տիրականը դու ես: Արձակուրդն էլ վերջնայ, դու իմ կշտից չպիտի հեռանաս:

Բայց և այնպէս նա վախով նկատել սկսեց, որ աղօթքն ու որդին էլ իրանց ոյժը կորցնում են, և յանցաւոր միտքը գլուխ է բարձրացնում, կարծես միայն հանգստանալու ու նորից երեսու համար էր հեռացել. մոխրի տակ ծածկուած կայծը յանկարծ բորբոքուեց, այլևս անպաշտպան մնացած Մարինան իր անզօրութիւնը պարզ տեսաւ: Փոփոխութիւնը արագ էր կատարւում. Գարեգինը նկատեց իսկոյն մօր վիճակի տարբերութիւնը, որ ըստ երևոյթին դեռ շատ հեռու էր գործնական լինելուց. բայց ինքն զգում իր մօր տանջանքի մեծութիւնը: Որդին իր տարիքից աւելի շատ բան էր հասկանում. այն, ինչ մօրն էր վերաբերում, նա լիովին ըմբռնում էր: Շարունակ մօր մօտ լինելով՝ ճանաչում էր նրա դէմքի ամենանուրբ արտայայտութեան նշանակութիւնը, գուշակում էր նրա ներքին աշխարհի, զգացմունքների յաջորդական փոփոխութիւնը: Այս դէպքում էլ հասկացաւ, որ մայրը նորից նոյն ցաւն ունի, ինչ որ ունէր ամառուայ սկզբներին, երբ այնպէս տարօրինակ վարմունք ունէր:

Օգոստոսի վերջին օրն էր. այդ օրն աւելի բան երբէք Մարինան ընկճուեց ու տարուեց: Ամբողջ օրը անգործ նստելուց յետոյ իր սովորութեան համաձայն երեկոյեան աշխատելու նստեց՝ լաւ իմանալով, որ ձեռքը նորից բանի չի կաշիւու:

Երեկոն լուսընկայ էր. ներս թափանցող կաթնագոյն լոյսը խառնուած ճրագի դեղին լոյսին՝ մի սպիտակաւուն գոյն էր առաջացրել: Խորոտ Մարինան նստել էր իր սովորական տեղում, ճրագի դէմուդէմ: Նրա գլխակապը բացուած էր, ամբողջ դէմքը երևում էր. երևում էր և սպիտակ մարմարէ վիզը: Դոգնոցի վզակապը նոյնպէս արձակուած՝ ցած էր կախուել. նրա տակից, տեղական կանացի տարադի համաձայն, երևում էին հագուստների իրար չհասած ծալքերը. իսկ սրանց միջից նեղ շերտով սպիտակին էր տալիս կանացի չքնաղ կուրծքը: Ծնկաչոք նստած, կարը ծնկին մոռացած՝ մտածում էր Մարինան: Այդ բոլէին հրաշալի էր երիտասարդ կինը. բաց-կապոյտ լոյսը նրա դէմքին կախարդական տեսք էր տուել. այս ապաւորութիւնը աւելի զօրեղանում էր խռոված ներքինը արտայայտող աչքերի փայլից: Ծանր մտքերը ճնշում էին նրան, սիրտը լցուած էր, դժուարութեամբ էր շնչում—հեղեղը ահագին էր, նա շուարել էր և չէր կարող դիմադիր ուժեր գտել—ինչո՞ւ մենակ եմ. ախ, ի՞նչ տանջանք է այս, մինչև երբ,—մտածում էր նա—միշտ մենակ, յաւիտեան լքուած, միշտ ու անվերջ կարօտել:

Բարձրիկ սարերաց ամենին տէր կայ,

Ամեն եղնիկին մէկ էլ մարդ մը կայ.

Ես խորոտ եղնիկ, ինձի տէր չըկայ.

Վով ինձ չի սիրի, ուր սիրտ սէր չըկայ:

Երգի այս տողերը յանկարծ ցցուեցին նրա մտքի մէջ, մի տարօրինակ եռանդ ստացաւ, դէն ձգեց կարը, աչքն ընկաւ իր բաց կրծքին, սիրտը արագ բաբախել սկսեց, դէմքը կարմրեց, աչքերը պսպղացին անսովոր փայլով:

—Ա՛խ, ես մե...նակ եմ. մարդ չկայ այստեղ. այսպէս անտէր տանջւում եմ երկար տարիներից ի վեր... կեանք չտեսայ. օրս խաւար եղաւ: Այսպէս տխուր ինչպէ՞ս մնամ. գոնէ մի ձայն լսէի, մի ձայն, որին ես կեանքս կը տայի...

Հեռուից մի անորոշ երգի ձայն լսուեց:

Նա կամենում էր դուրս վազել, ձայն տալ, ձայն լսել, բայց քարացածի նման՝ շարժուել չէր կարող:

Յանկարծ որբացող, բայց զօրեղ ձայնով հնչեց Ադօի երգը. ճնշուած, կլկլացող ձայնի ալիքները հմայեցին արդէն քար կտրած Մարինին: Բիւրդը ուզել էր երգով իմաց տալ Մարինին իր վերադարձը. իր սրտի զօրեղ կարօտի թափը ուժով արտայայտւում էր. զգաց այդ Մարինան, և նրա տղամարդու ձայնի կարօտող սիրտը հանդարտուեց. «Մենակ չեմ», մըմնջաց նա. «կայ մէկը, որ միշտ ինձպէս տանջւում է, և այն ինձ հա-

մարդ. քիւրդ երիտասարդի ամբողջ հոգին իր անվերջ տանջանքներով նման էր իրանին. զգաց նրա վերքի խորութիւնը, դատապարտեց իր անտարբերութիւնը, և զղջման ու կարեկցութեան արցունքներ հոսեցին իր աչքերից: Մարինան մոռացաւ իր գոյութիւնն անգամ ու Ադօի վիշտը ընդգրկեց, որ հէնց իրանն էլ էր: Վաղուց էր լսել երգը, բայց նա լսում էր դեռ ևս, մինչև առաւօտ էլ կը լսէր, եթէ Ադօն ինքը չխանգարէր, չըսթափեցնէր նրան:

Մարինան ակամայ դէպի դուռն էր ուղում գնալ, բաց անել, օտո կանչել Ադօին. իսկ Ադօն երգը վերջացնելով՝ իր գիշերային այցն էր տալիս. նա պատուհանից ծածուկ դիտում էր Մարինին՝ սքանչացած նրա գեղեցկութեամբ:

—Մարինա, դուրս թո՛ւա նրա բերանից:

—Ի՞նչ է,—պատասխանեց կինը նոյնպէս անգիտակցաբար:

Ի՞նչքան դուրեկան էր տղամարդու ձայնը. արցունքոտ աչքերով սիրով նայեց պատուհանում երևացող դէմքին: Նրան չէր հետաքրքրում, թէ Ադօն ո՞վ է. բաւական է, որ նա տղամարդ էր:

—Եկել եմ, Մարինա խանժմ. գիւղից պրծել՝ երեկ եմ եկել. դժւ ինչպէս ես. այդ ի՞նչ է պատահել քեզ, շատ ես մաշուել. ես էլ շատ եմ տանջուել... քո սիրով:

Մի բախտաւոր, երջանիկ ըոպէ էր երկուսի համար էլ. Մարինան դէպ ընկեր-տղամարդ ունեցած կարօտն էր առնում, Ադօն իր սիրած գեղեցիկ կնոջ նայելով էր հրճւում. իսկ այն սիրալիր վերաբերմունքը, որ նոր էր տեսնում նրա կողմից, արդէն չափազանց էր մոռացնել տալու անցած երկարատե վիշտը:

—Մայրի՛կ...—հնչեց անողոք դատաւորի խիստ ձայնը. շշուշով արտասանած այս թոյլ ձայնը որոտի պէս օձը ականջին հնչուեց, տունը ասես փուլ եկաւ նրա գլխին, դողաց մի տերեկի նման, զարհուրեց, և Ադօին՝ «գնա՛» հազիւ կարողացաւ ասել: Այդպէս անսպասելի, անկոչ միջամտութիւնը շատ անսիրտ էր: Այդ ձայնը նրան իր պարտականութիւններն էր յիշեցնում. «Դու մայր ես, դու ամուսին ունիս», լսում էր Մարինան: Բայց այդ մայրութիւնն ու ամուսինը ի՞նչ էին իր համար, միայն տանջանք ու անվախճան վիշտ. և մայրը ցաւով ու զայրոյթով նայեց որդուն. նա էր, որ կանգնած էր իր երջանկութեան ճանապարհի վրայ:

Գարեգինը սարսափած ու գունատ նստել էր անկողնում. նա արթնացել էր խօսակցութեան ձայնից: Լացից ծովոտեղ գիմազծերը, խառնուած ու ցցուած մազերը, կիսաբաց բերանը,

կծկուած շրթունքները սաստկացրին մօր զայրոյթը. կարծես չէր ճանաչում իր որդուն, օտար թուաց այդ դէմքը, որին իր մայրական գորովի ժամերին երկար նայել էր ու չէր յագեցել: Նա տեսնում էր միայն մի չնչին արարած, որ իր անվերջ տանջանքի շղթան չէր թողել կտրուելու...

— Ի՞նչ եմ արել քեզ, մայրիկ, որ այդպէս նայում ես ինձ. դու իմ մայրիկը չեմ...

Այս անմեղ խօսքերը, ձայնի յուսակտուր եղանակը, իր ծանօթ ու սիրելի ձայնի անսպաշուպան նայուածքը տակնուվրայ արին մաշուած մօր սիրտը, զարթնեց քնած զգացմունքը: Ներքին կոհլը ուժգին էր, մաքառում էին «մայր» և «կին»։ Կորաւ Մարինի գիտակցութիւնը, նրա առանց այն էլ ցաւատանջ հոգին չդիմացաւ նոր հարուածների, և նա ծանր հոգոց հանելով՝ նուազած ընկաւ, գրկեց որդուն ջերմ-ջերմ, և մինչև լոյս քնեց ասես մի ծանր աշխատանքից յետոյ:

Այն տագնապալի գիշերից յետոյ Մարինան շարունակ Ադօի մասին էր մտածում միայն, չափում էր այն անանցանելի պատուարը—ազգութիւն և կրօն—որ բաժանում էր իրան սիրած տղամարդուց. իրողութեան, սոսկալի իրողութեան գիտակցութիւնը սկայնում էր նրա սիրտը. նա տանջւում էր: Ո՞ւր մեղադրէր, ո՞ւր անիծէր իր չարաբաստիկ բախտի համար. իր մարդո՞ւն. նա շատ հեռու էր, գուցէ և մեռած, անէծքը նւրան չէր հասնի. որդին էր հօր յիշատակը, իր դահճի փոխանորդը. որդին սկսեց ատելի դառնալ. նրա նայուածքը, դէմքը յիշեցնում էին մոռացուած մարդուն: Խեղճ որդին երազի մէջ էր կարծես. երբեմն արժանանում էր ատելութեան, հայհոյանքի, մօր թունաւոր հայեացքը սպանում էր նրան, իսկ երբեմն փայփայանքի, համբոյրի, մօր արցունքը ողողում էր նրա երեսը. այս բոլորներին էլ տանջւում էր խեղճ Գարեգինը, որովհետեւ չգիտէր, արդեօք երկմը է տեւելու այդ դրութիւնը:

Տանջանքի այդ օրերից մէկում դուռը բացուեց, և շեմքի վրայ յայտնուեց Անթառամ խաթունը, մի խելացի, աչքաբաց պառաւ, որ բոլոր անտէր մնացած կանանց պաշտպանն ու հովանաւորն էր: Պառաւ իր ձեռքը համբուրել տալուց յետոյ քննող հայեացքով դիտեց Մարինին.

— Հողը մանեմ, Մարինա, որդի, երեսիդ գոյնը ինչո՞ւ է թռել. հիւանդ խօ չեմ. ո՞ւր է «խորոտ Մարինէն», սեւ կապեմ: Հասկանում եմ, բալա ջան, հասկանում եմ. դու էլ իմ Ալմաստի օրին ես: Զեր մարդու գնացած ճամբէն սկանայ. էսպէս եղնիկին ո՞վ անտէր կը թողնի կ'երթայ: Տէր Աստուած, էս ի՞նչ ցատում, պատուհաս է. դուրումից պակաս չէ էս խեղճերի քա-

շածը. անլեզու անասունի պէս տանը փակուած՝ խորովուած են, տապալուած, մարդ բան չի իմանայ. ներսի կրակը աւելի աւելող է: Ձեզպէսներին տեսնելով՝ սիրտս կտոր-կտոր է լինում. ես էլ եմ քաշել, գիտեմ: Աստուած էլ իր սիրտը դառնացրել է. էլ խուճկ ու մոմ, էլ մատաղ, էլ «Կուրիսահան սուրբ Մինաս», ամեն բան արի, ճար չեղաւ ու չեղաւ, փեսէս «ոտով գլխով» կորաւ:

Անթառամ խաթունի կարեկցական խօսքերը այնպէս մօտիկ էին Մարինի սրտին, այնպէս սրտառուչ, որ սա հեկեկաց ու գլուխը պառաւի կրծքին դրեց: Ամենքից թողնուած, անտէր, որը կինը երեսայի նման լաց էր լինում. եղաւ վերջապէս մի հոգի, որ առանց իր պատմելուն հասկացաւ իր ներքինը—իր վիշտը: Պառաւը չորացած ձեռներով բռնեց նրա գլուխը, համբուրեց և մխիթարող խօսքեր ասաց.

—Լաց, Մարինա, լաց, ձագճակ, թող սիրտդ հովանայ: Աստուծով շուտով օր ու աստուոր կը տեսնես: Էս կոտորուած ոտներով ամեն թաղ ման եկայ, իմացայ ամեն անբախտների հալը. քսանըծթ ջահէլ հարս կայ, որ իմ Ալմաստի ու քեզ պէս են. ամենն էլ աղքատ, ամենի մարդն էլ որը կորած, որը կարիքութի մէջ մեռած, իրենք էլ աւուր հացի կարօտ: Ձեր բոլորի ջանին մեռնիմ, ջահէլ, խորոտ, բոլորիդ համար էլ լաւ մարդ պիտի գտնեմ ու պսակեմ: Չմեռնեմ, մինչև ձեր դարդին դարման անեմ, այն ժամանակ թող Աստուած հոգիս առնի: Առաջնորդարանի դուռը պիտի մաշեմ. տասն անգամ կը տաճկանամ, կը հայանամ, մինչև որ ձեր պսակի հրամանն առնեմ. մինչև Պոլիս էլ կ'երթամ ու էս բանը կ'անեմ: Երկու անգամ ողորմածիկ մարդուս համար եմ գնացել, մինչև որ հաղիւ քսնողել, էնտեղից յետ եմ բերել. մէկ էլ թող ձեզ համար գնամ, ձեր անկրակ վառուող ջանին մատաղ, ինձ Անթառամ խաթուն կ'ասեն:

Մարինան պառաւի ձեռքը շրթունքներից չէր հեռացնում, անչափ շնորհակալութեամբ համբուրում էր այդ բարի հոգու ձեռքը, և երբ սա գնալ ուզեց, խնդրեց, որ վաղը նորից գայ: Անթառամի խօսքերը և խոստումը նրա համար փրկութեան աւետիս եղան: «Իմ ցաւերի վերջը հասել է,—մտածում էր.—ինչքան յիմար եմ եղել. զգու՛ս եմ նորելուկ մտքերից. առաջ յաղթում էի նրանցից, այժմ արհամարհում եմ: Լքուած ամենից՝ յուսահատ ըռպէսներին ծայրայեղ որոշումներ եմ արել, բոլորը յիմար ցնորքներ էին, գիշերային մտածումներ: Սակայն այս բոլորը անցան. ես ամենևին չեմ բաժանուի իմ Գարեգնից և շուտով ուրախ օրեր էլ կը տեսնեմ»:

Վերջին օրերում հացի թանձրութիւն էր տիրում. արհեստական կերպով առաջացրած սովը, որ սովորական բան էր, նորից կրկնուեց մի քանի անգամ: Աշխատանքն էլ պակասում էր. նրա ջանքերն իզուր էին, գործ չկար ու չկար. նորից Ադոն օգնել ուզեց, բայց զարմացած քիւրդի երեսին շարտուեց նրա օգնութիւնը: Չնայած այս նեղութիւններին՝ Մարինան հանգիստ էր. ինչքան էլ դրութիւնը անտանելի լինէր, արդէն վերջը հասել էր. նա անհամբեր սպասում էր Անթառամ խաթունի գալուն: Այնքան էր առաջ գնացել իր լաւատես մտածունների մէջ, որ սպասում էր, թէ պառակի առաջին խօսքը իրնոր վիճակի մասին կը լինի: Այսպէս քաղցած դրութեամբ նա ուրախ սրտով գրկում էր Գարեգինին, պատմում էր չեղած ապագայ օրերի մասին. նրա տանջուած հոգին ապագայի մասին երազելով էր զբաղուած:

— Բան չկայ, Գարեգին, էս սև օրերը շուտով կը վերջանան, մի քիչ էլ համբերենք, թող քիչ էլ քաղցած մնանք, Աստուծով շուտ կը պրծնենք մեր դարդերից. մինչև էսօր սև բախտի տէր էինք, հիմայ այդ էլ կը փոխուի:

Հաստատ յոյսը կուրացրել էր նրան. նա զօրով ուզում էր հաւատալ, իր երեակայութիւնը եղած իրականութեան տեղ էր ընդունում:

Անթառամը եկաւ. որոշել էին, որ ամեն մէկն իր ծխատէր քահանայի միջոցով նորից դիմի առաջնորդին: Ինքը ամեն խմբի հետ եկեղեցում խօսել էր և ստիպել քահանաներին. նըրանք խորհուրդ էին տուել, որ բոլոր այրիները խմբով դիմեն առաջնորդին. «Այդպէս վճռական դիմումից յետոյ սրբազանը անպատճառ մի բան կ'անի», ասել էին նրանք:

Տեղական սովորութեամբ ամեն ուրբաթ օր քաղաքի մայր եկեղեցում—ս. Նշան կամ Էջմիածին պատարագ էր լինում: Վաղ առաւօտից արուարձանների հայ կիները սպիտակ ծածկոցներով խումբ-խումբ դիմում էին դէպի ս. Նշան: Այդ օրը սովորաբար լինում էր և՛ կրօնական ժողովը. ամենից յարմարն այդ օրն էր:

Արշալոյսին բոլոր բողոքաւոր կիները հաւաքուեցին քաղաք տանող մեծ ճանապարհի վրայ գտնուող մի այրիի տանը, որտեղից Անթառամ խաթունի առաջնորդութեամբ այս նորատի հարսների շարքը ճանապարհ ընկաւ: Մի օր առաջ պատրաստել էին տուել մի խնդրագիր. նրա մէջ մանրամասն պարզուած էր իւրաքանչիւրի դրութիւնը և ստորագրուած: Խնդրի վերջում պահանջում էին հեռագրով պատասխան ուզել պատրիարքից: Թուղթը իր մօտ էր վերցրել պառակը, թաշկինակի

մէջ փաթաթած՝ դրել էր ծոցը, մի ձեռքով փայտն էր բռնել, միւսով թանկագին թուղթը: Տխուր տպածորութիւն էր թողնում այդ օտարոտի թափօրը. դէպի շուկայ շտապող մարդիկ պատճառը զարմանքով էին լսում. կանանց կողմից անսպասելի էր այդ:

—Անթառամ խաթուն, այս բոլորի պատճառը դո՛ւ ես. էդ անելու բան է, որ դու անում ես,—ասացին մի քանիսը հանաքով:

—Կարեմ բոլոր տղամարդերի պատանքը, հա՛. իհարկէ, ձեր ինչ խելքի բանն էր. առաւօտ կ'երթաք, երեկոյ կը դաք, ձեր զաւակների, կնոջ հետ կ'ուրախանաք. իսկ չէք իմանայ, թէ դժբաքին ինչ վիճակի մէջ է. դուք անսխիւտ էք. էս խղճերի մարդերն էլ ձեզ պէս չէն, հոգեմ նրանց գլուխը:

Պատարագից յետոյ դիմեցին առաջնորդարանի բակը. բարապան-դռնապանը արգելեց վեր բարձրանալը. Անթառամը ձայնը բարձրացրեց, որից առաջնորդը, արդէն առաջուց իմացած, դուրս նայեց պատուհանից և խնդիրը ուզեց: Կարգալուց յետոյ ասաց, որ ինքը վաղուց գրել է արդէն, թող գնան ըստ պահան:

—Սրբազան, ոտքերիդ մեռնիմ, մինչև երբ համբերել, համբերութեանն էլ չափ կայ. չի՛ լինի, սուրբ կարգիդ մատաղ, հեռագիր տուր քո անունով, մենք փողը բերել ենք:

Առաջնորդի յորդորը չազդեց, նա ստիպուեց հեռագիր տալ: Պատասխան ստանալու համար ժամանակ էր հարկաւոր, խնդրատուները բարեկամների տները ցրուեցին: Միւս օրը եկած պատասխանով պատրիարքը սպասել էր հրամայում...

Ծանր էր թշուառների դրութիւնը. յուսահատ լացով թողին առաջնորդարանը. վշտի հանուր լինելը, բախտակից գրտնելը մի քիչ թեթեւացնում էր նրանց վիճակը. իրար յուսադրելով բաժանուեցին: Ամենից աւելի ծանր էր Մարինի ստացած հարուածը. դատարկ տունը, հիասթափութիւնը, խորտակուած յոյսը խելագարութեան աստիճանի ճնշեցին, շմեցրին նրան: Առաջուայ դաժան օրերը ոչ թէ վերջացան, այլ նոր ուժգնութեամբ եկան, ծանրացան խեղճ տան վրայ: Տանջանքի բնակարան էր դարձել տարաբախտ այրու տունը և այդպէս էլ պիտի շարունակուէր: Մաշոյ գիշերները, տանջող մտքերն այրում, մրկացնում էին երկու զոհերին: Ոչ ցերեկ գիտէին, ոչ գիշեր: Փախաւ, կորաւ յենակէտը, մնում էր տապալուել: Ամբողջ աշխարհը զզուելի անտարբերութեամբ անկարեկից եղաւ. մի կար կարեկից—մի խելագար այլազգի, որ իր հետ իրանով էր ապրում. նրա մասին եղած մտածողութիւնը, մոռացուած

մտքերը եկան նորից, տարածուեցին, կլանեցին ամբողջ աշխարհը, որի միջից միայն մի հոգի էր երևում. դա Ադոն էր: Շատ անգամ թուլացաւ, ընկճուեց. բայց երբ մտածածը գործի փոխելու էր գալիս, միշտ տատանւում, յետաձգում էր: Նա իր բուռն ցանկութեան հակառակ՝ անկարող էր այդ քայլն անել, ինքն էլ չէր իմանում ինչու: Ու սպասում էր Մարինան:

Իսկ երբ աշխարհը քանդուեց Մարինի գլխին, — ձմեռուայ մահացնող շունչը բաց պատուհանից ներս սողաց, գրկեց մանուկ մարմինը, սառեցրեց նրան, «կապոյտ հազը» մօր գրկում խեղդեց ծաղիկ որդուն — այն ժամանակ բաժակը լցուեց և պիտի թափուէր անպատճառ. չափը լրացաւ:

Դուռը ծեծում են, ուստի պիտի բաց անել. աւելի լաւ, որ մտնողը Ադոն էր: Մտաւ Ադոն. իր մխիթարական խօսքերով զինաթափ արաւ անյոյս հակառակորդին: Գիշերային անսովոր այցելութիւնները սովորական դարձան և ընտելացրին. ամեն բան երազի պէս էր. անգործ սպասել, այցելուին ընդունել... Յետոյ երբ ապշութեան օրերը անցան, իրողութիւնը կատարուած, պրծած էր արդէն, մնում էր գիտակցաբար, կամաւ և էլ աւելի խրուել տղմի մէջ — Մարինան գիտակցաբար էլ ընկաւ: «Շն այժմ ընկած կին եմ, բայց մեղաւոր չեմ», ասուած էր նա ինքնիրան:

Նա երկար կռուեց ու այնպէս ընկաւ...

ԳԱԼՈՒՍՏ

ՇՎԷՑՑԱՐԱԿԱՆ ԳԻՒՂԸ *)

Համայնքի մասին խոստացայ քեզ գրել, սիրելիս, ստիպուեցի հեռուից սկսել, և նախաբանս երկար եղաւ: Այս նամակով դառնում եմ իմ բուն նիւթին՝ շվէյցարական համայնական կազմակերպութեանը: Թէև ես նախ խօսեցի շվէյցարական դաշնակցութեան, կանտոնների մասին, բայց սխալ կը լինի այստեղից եզրակացնել, որ այս երկրի վարչական կազմակերպութեան մէջ իշխում է այն ստորաբաժանման սխտեմը, որ յատուկ է կենտրոնացման բեժիմի ենթակայ պետութիւններին:

*) Տես «Մուրճ», № 2.